



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիոյան

«03» 09 2024թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 179 - 24

Նախաձեռնող՝

«Երևաննախագիծ» ՓԲԸ
ք. Երևան, Կենտրոն, Բուզանդի փող. /Ը/ 1/3

Գործունեությունը՝

Դավիթ Բեկի փողոց 103/5 հասցեում
նախատեսվող բազմաբնակարան բնակելի
համալիրի կառուցում
Նոր Նորք վարչական շրջան

Առդիր՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 179 - 24

«03» սեպտեմբերի 2024թ.

Նոր Նորք վարչական շրջան Դավիթ Բեկի փողոց 103/5 հասցեում նախատեսվող բազմաբնակարան բնակելի համալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝	«Երևաննախագիծ» ՓԲԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն, նախագծային փաստաթղթեր
Գտնվելու վայրը՝	ք. Երևան, Նոր Նորք վարչական շրջան

Ներածական մաս. «Երևաննախագիծ» ՓԲԸ-ի կողմից՝ փորձաքննության ներկայացված նախատեսվող գործունեության նպատակն է Նոր Նորք վարչական շրջանում կառուցել բազմաբնակարան բնակելի համալիր, որի կառուցապատողը հանդիսանում է «Գրին Հիլզ» ՍՊԸ-ն:

Նախատեսվող գործունեությունը, համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» (ՀՕ-150-Ն) օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետի ա. ենթակետի՝ դասակարգվում է «Բ» կատեգորիայի գործունեության տեսակների ցանկում:

Հողամասի նպատակային նշանակությունը բնակավայրերի է, գործառնական նշանակությունը՝ ըստ ճարտարապետահատակագծային առաջադրանքի՝ բնակելի կառուցապատման, գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն:

Նկարագրական մաս. Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է Նոր Նորք վարչական շրջանի Դավիթ Բեկի փողոց 103/5 հասցեում:



Գեոմորֆոլոգիական տեսակետից ուսումնասիրվող տարածքը գտնվում է Ջրվեժ-Նորք հրաբխային սարավանդի սահմաններում: Մակերեսի նիշերը տատանվում են 1244.0-1248.0 մետրի սահմաններում: Համաձայն ներկայացված ինժեներատեխնիկական ուսումնասիրության արդյունքների տեղամասում իրականացված հորատման աշխատանքների ընթացքում մինչև 30.0 մետր խորությամբ գրունտային ջրեր չեն բացահայտվել:

Համաձայն հաշվետվության մեջ ներկայացված տեղեկատվության՝ Կարմիր գրքերում գրանցված բուսատեսակներ և կենդանատեսակներ գործունեության ենթակա տարածքում չեն հայտնաբերվել: Նախատեսվող գործունեության տարածքը չի առնչվում բնության հատուկ պահպանվող և (կամ) պատմամշակութային հուշարձանների հետ:

Բազմաբնակարան բնակելի համալիրը բաղկացած կլինի երկու մասնաշենքերից՝ վերանախագծվող մասնաշենք և նոր նախագծվող մասնաշենք:

Վերանախագծվող մասնաշենքը տեղադրված է Դավիթ Բեկի փողոցի երկայնքով և բաղկացած է երկու հատվածամասերից՝ առանձնացված դեֆորմացիոն կարանով: Վերանախագծման արդյունքում անփոփոխ կմնան մասնաշենքի ստորգետնյա /ավտոկայանատեղեր/ և ցոկոլային /հասարակական սպասարկման/ հարկերը, հարկայնությունը կավելանա ևս երկու բնակելի հարկերով և կփոփոխվեն ճակատային լուծումները: Համապատասխանաբար վերանախագծվող մասնաշենքը բաղկացած կլինի մեկական ստորգետնյա և ցոկոլային հարկերից, իսկ եզրային հատվածներում նախատեսվում է 7 վերգետնյա, իսկ միջնամասում՝ 6 վերգետնյա հարկեր:

Նոր նախագծվող մասնաշենքը տեղադրվելու է վերանախագծվող մասնաշենքին զուգահեռ՝ հողամասի հանդիպակած բարձրադիր մասում: Այն բաղկացած կլինի 3 ստորգետնյա և 12 վերգետնյա հարկերից: Ստորգետնյա 3 հարկերը նախատեսված կլինեն որպես ավտոկայանատեղեր, առաջին վերգետնյա հարկը՝ հասարակական սպասարկման և 11 բնակելի հարկեր:

Բնակչության սակավաշարժ խմբերի ազատ տեղաշարժվելու համար գլխավոր մուտքին կից կլինի թեքահարթակ, իսկ վերելակներից մեկը կապահովի հենաշարժողական համակարգի խնդիրներով մարդկանց և սայլակների ազատ տեղաշարժը:

Բնակելի համալիրի ջրամատակարարումն ու ջրահեռացումն իրականացվելու են համաձայն տեխնիկական պայմանի՝ միանալով «Վեոլիա Ջուր» ՓԲԸ ցանցին: Ջրամատակարարումը նախատեսվում է իրականացնել Մաքրավանի ջրաղբյուրից, կոյուղին և հեղեղատարը հնարավոր է իրականացնել Դավիթ Բեկի փողոցով անցնող՝ համապատասխանաբար D=1000մմ կոյուղատարին և D=800մմ հեղեղատարին:

Գազամատակարարումը 420խմ/ժամ նախատեսվող ծախսով հնարավոր է իրականացնել Ջրվեժ ԳԲԿ-ն սնող Dպ=300մմ կողմնատար գազատարից:

Շինարարական աշխատանքների ընթացքում և շահագործման փուլում էլեկտրամատակարարումը կիրականացվի համաձայն տեխնիկական պայմանի, որի համար լիցենզավորված կազմակերպության կողմից կիրականացվի նախագիծ:

Նախատեսվում է իրականացնել անհատական օդափոխման և ջեռուցման համակարգեր՝ համապատասխան ձայնամեկուսիչների օգտագործմամբ՝ ապահովելով աղմուկի ցածր



մակարդակ: Ավտոկայանատեղում նախատեսված են առանձին մեխանիկական դրդմամբ օդափոխության համակարգեր:

Տեխնիկատնտեսական ցուցանիշներն են՝

- հողատարածքի մակերես՝ 5506.7 քմ,
- կառուցապատման մակերես՝ 2093.7 քմ (35.7%),
- կանաչապատման մակերես՝ 2358 քմ (48.1%),
- անջրանցիկ մակերես՝ 930 քմ (16.2 %),
- ջրանցիկ սալահատակ՝ 125 քմ,
- ստորգետնյա կառուցապատման մակերես՝ 5325 քմ,
- ավտոկայանատեղերի քանակ՝ 141,
- բնակարանների քանակ՝ 140:

Հիմքերի փորման աշխատանքների իրականացման ընթացքում ե/բ հիմքերի տեղադրման համար նախատեսվում է իրականացնել մոտ 17200 խմ ընդհանուր ծավալով փորման աշխատանքներ: Հանվող զանգվածը՝ 14100 խմ ծավալով, կտեղափոխվի Երևանի քաղաքապետարանի կողմից հատկացված վայր, մնացած մասը՝ կարճաժամկետ կապահվի շինարարական հրապարակում և կօգտագործվի որպես հետլիցք:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը կանաչապատել և բարեկարգել: Կանաչապատումն իրականացվելու է համաձայն բարեկարգման, արդիականացման և կանաչապատման նախագծի: Տարածքում կիրականացվի սիզամարգի ցանքս, կտնկվեն տեղանքին բնորոշ ծառեր և թփեր:

Ներկայացվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված կլինեն փորման, բեռնման աշխատանքների, հողային զանգվածների տեղափոխման, շինարարական տեխնիկայի շահագործման, ջրամեկուսացման համար օգտագործվող նյութերի կիրառման, բետոնային աշխատանքների հետ:

Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում հիմնական ռիսկերը կապված կլինեն առաջացող փոշու արտանետումների հետ՝ քանդման, հիմքերի փորման, շինարարության ընթացքում, նաև վառելիքի արտանետումների հետ՝ շինարարական տեխնիկայի շահագործման ժամանակ և այլն:

Մթնոլորտային արտանետումները կանխելու կամ նվազեցնելու նպատակով նախատեսվում է՝ շինարարական աշխատանքների ընթացքում ջրցանի իրականացում, շինարարական տեխնիկայի վիճակի պարբերաբար ստուգում և կարգավորում, շինարարական նյութերի տեղափոխում փակ ծածկով մեքենաներով, շինտեխնիկայի անվադողերի լվացում շինհրապարակից դուրս գալուց առաջ, սրուն նյութերի պահեստների ծածկում՝ համապատասխան բարձրությամբ թաղանթով, ինչը կկանխարգելի փոշու տարածումը:

Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով նախատեսվում է՝

- ջրցանի ծավալների հաշվարկում, որը չի առաջացնի մակերևութային հոսքեր և կբավականացնի միայն փոշենստեցման համար,
- անձրևների ժամանակ առաջացող շինարարական հոսքաջրերի ուղղորդում 100 խմ ծավալով, պլաստիկ տարողությամբ պարզարան, որտեղ մեխանիկական



նստեցումից պարզեցված ջուրը կօգտագործվի տարածքի ջրցանման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի:

Հողային ռեսուրսների պահպանության համար՝

- շինարարական գործընթացներում կիրառվող տեխնիկայից նավթանյութերի արտահոսքի հավանականությունը կանխարգելելու նպատակով, անհրաժեշտ է, որ այդ տարածքներում ապահովվի սարքավորումների և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակ,
- կկիրառվեն ժամանակակից տեխնիկական միջոցներ,
- աշխատանքների ավարտից հետո կմաքրվեն բոլոր տարածքները և առաջացած թափոնները կտեղափոխվեն ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր:

Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում կառաջանան՝

- շինարարական աղբ, որն ամբողջությամբ կտեղափոխվի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր,
- կենցաղային աղբ, որը կհավաքվի աղբահավաք տարաներում և կտեղափոխվի մոտակա աղբավայր,
- փորման աշխատանքների ընթացքում առաջացած մնացորդային գրունտ, որը կտեղափոխվի ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր:

Շինարարական աշխատանքների ընթացքում հնարավոր են արտակարգ իրավիճակներ՝ հրդեհի առաջացում, հեղուկ նյութերի արտահոսք, շահագործվող տեխնիկայի հետ վթարներ և այլն: Հնարավոր ազդեցությունների բացառման և նվազեցման համար նախատեսվում են մի շարք միջոցառումներ, որոնք տրված են հաշվետվության համապատասխան բաժիններում:

Աղմուկի մակարդակը նվազեցնելու համար անհրաժեշտ է՝

- խուսափել մեքենաների և սարքավորումների կայանելուց՝ բնակելի տների և այլ հասարակական շենքերի հարևանությամբ,
- աղմկահարույց աշխատանքների իրականացում օրվա ցերեկային ժամերին, շինարարական աշխատանքների և տրանսպորտի տեղաշարժի կազմակերպում ցերեկային ժամերին,
- աղմուկի առաջացման ժամանակակից ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցների ներգրավում, ինչպես նաև դրանց շահագործում տեխնիկական նորմալ վիճակում, մեքենաների ապահովում համապատասխան խլացուցիչներով,
- կառուցապատման տարածքում ձայնակլանիչ, թրթռամարիչ սարքերի և կոնստրուկցիաների կիրառում, աղմուկի, վիբրացիայի, արտանետվող գազերի թույլատրելի նորմերի պահպանում, չափազրում,
- շինհրապարակում աղմուկի մակարդակը գերազանցելու դեպքում՝ աշխատողներին ականջակալներով ապահովում:

Բնակելի համալիրի շինարարական աշխատանքների ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման/մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.



- մթնոլորտային արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ ամիսը մեկ անգամ հաճախականությամբ,
- փոշենստեցման նպատակով տարածքի ջրցանում՝ տարվա շոգ և չոր եղանակներին՝ օրական 2-3 անգամ,
- օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ անգամ հաճախականությամբ,
- աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ անգամ հաճախականությամբ,
- կանաչապատման աշխատանքներ իրականացնող կազմակերպությունը հետևողական լինի տնկված ծառերի աճին և խնամքին,
- հարակից տարածքներում կենսաբազմազանության մոնիթորինգ՝ երեք ամիսը մեկ անգամ հաճախականությամբ:

Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է մասնահանել ամբողջ շինարարության ընթացքում 2440000 ՀՀ դրամ:

Պատճառաբանական մաս. գնահատման հաշվետվության և փորձաքննության փուլերում, օրենսդրությամբ սահմանված կարգով, Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի ղեկավարի նստավայրում անցկացված հանրային քննարկումներում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության:

Հաշվետվության վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից, քաղաքաշինության կոմիտեից, կադաստրի կոմիտեից, Նոր Նորք վարչական շրջանից, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից: Ստացված դիտողություններն ու առաջարկությունները հաշվի են առնվել հաշվետվության լրամշակման մեջ:

Ամփոփելով հաշվետվության բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք առնչվում են շինարարական աշխատանքների հետ, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում: Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ:

Փորձաքննական պահանջներ

1. Աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է առաջնորդվել ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի պահանջով՝ աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմին:



2. Շինարարության ընթացքում ապահովել բնապահպանական կառավարման և մոնիթորինգի պլաններում նախատեսված միջոցառումների իրականացումը սահմանված ժամանակահատվածում:
3. Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում առաջացող շինադրի և թափոնների հեռացումն ու տեղափոխումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր:
4. Կանաչապատումն անհրաժեշտ է իրականացնել տարածաշրջանին և տեղի կլիմայական պայմաններին բնորոշ ծառաթփային բուսականությամբ՝ Կառավարության 2018 թվականի փետրվարի 8-ի N108-Ն որոշման պահանջներին համապատասխան:
5. Կառուցապատման աշխատանքների ընթացքում պահպանել «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի 11-րդ հոդվածով սահմանված պահանջները:

ԵԶՐԱՓՈՒԿ ԿԻՉ ՄԱՍ

«Երևաննախագիծ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի Դավիթ Բեկի փողոց 103/5 հասցեում նախատեսվող բազմաբնակարան բնակելի համալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն



Իսաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝

Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջին կարգի մասնագետ՝

Սվետլանա Կիզիրյան